ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 849 Ա/Ք « 13 » սեպտեմբերի , 2012 թ.

«ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 2012» ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թ. սեպտեմբերի 12-ի N 1579-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կանոնադրության 14 կետի «դ» ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Կազմակերպել «Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր–2012» մրցույթը:

2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելված N1-ի և հրավերի փաթեթը՝ համաձայն հավելված N2-ի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանին:

/Ա. ԱՇՈՏՅԱՆ

Հավելված N1
ՀՀ ԿԳ նախարարի
«13» սեպտեմբեր 2012 թ.
N 849Ա/Ք հրամանի

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ու Թ Յ Ու Ն

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը հայտարարում է հայագիտության և հումանիտար, բնական, բժշկական, գյուղատնտեսական, հասարակական գիտությունների ու ճարտարագիտության և տեխնոլոգիայի բնագավառներում ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում անցկացվող «Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր – 2012» **ՄՐՑՈՒՅԹ**:

Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե՝ մրցույթի մասին հայտարարության հրապարակման օրվանից 45 օրացուցային օրվա ընթացքում:

Մրցույթի հրավերի փաթեթը զետեղված է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի ինտերնետային կայքում (www.scs.am):

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչությունում՝ աշխատանքային օրերին ժամը 14:00 - 17:00:

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն

Հավելված N2
ՀՀ ԿԳ նախարարի
«13» սեպտեմբեր 2012 թ.
N 849Ա/Ք հրամանի

ՀՐԱՎԵՐ

«ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 2012» ՄՐՑՈՒՅԹԻ

1. ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն (այսուհետև՝ Կոմիտե), «Բարեպաշտ սերունդ» և Հայաստանի երիտասարդական հիմնադրամները գիտական և գիտատեխնիկական գործունեության բոլոր բնագավառների մասնագիտություններով (հավելված N1) հետազոտությունների իրականացման համար մրցութային կարգով կտրամադրեն հետևյալ դրամաշնորհները.

- մինչև 1500000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ մեկամյա անհատական աջակցություն՝ պետական պատվերով առկա (բացի ուսուցման երրորդ տարվա) և հեռակա ուսուցման ասպիրանտներին,
- մինչև 1125000 (մեկ միլիոն մեկ հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ իննամսյա (2013 թվականի հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը) անհատական աջակցություն՝ պետական պատվերով առկա ուսուցման երրորդ տարվա ասպիրանտներին:

2. Մրցույթի արդյունքում նախատեսվում է տրամադրել մինչև 20 (քսան) դրամաշնորհ, որոնցից մինչև 15-ը (տասնհինգ) կֆինանսավորի Կոմիտեն՝ ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում, 3-ը (երեք)՝ «Բարեպաշտ սերունդ» հիմնադրամը, իսկ 2-ը (երկու)՝ Հայաստանի երիտասարդական հիմնադրամը: Ընդ որում, «Բարեպաշտ սերունդ» և Հայաստանի երիտասարդական հիմնադրամներն ասպիրանտներին դրամաշնորհներ կտրամադրեն իրենց հայեցողությամբ՝ թեմաներն ընտրելով մրցույթի վարկանիշային ցանկի շեմային պայմանը հաղթահարած գիտական թեմաների ցանկից:

3. Մրցույթին մասնակցող ասպիրանտը պետք է հանդիսանա Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչ և գիտական թեմայի իրականացման ընթացքում բնակվի Հայաստանի Հանրապետությունում:

4. Մրցույթի հայտը (այսուհետև՝ Հայտ) Կոմիտե ներկայացնել ասպիրանտի գրավոր դիմումով (հավելված N2) անձամբ (աշխատանքային օրերին ժամը 10:00 - 13:00 և 14:00 - 17:00, Երևան, Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 708 սենյակ) կամ փոստով (Երևան 0028, Օրբելի եղբայրների 22, ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե):

5. Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2012 թ. հոկտեմբերի 29-ը:

6. Հայտը ներկայացնել գիտական թեմայի տեսքով՝ սույն հրավերի հավելված N1-ում նշված գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների մասնագիտություններին ու

հավելված N3-ի ձևերին համապատասխան: Հավելված N3-ի ձևերը ներկայացնել սոսնձված ծրարով:

7. Հայտին կցել այն կազմակերպության գիտական (գիտատեխնիկական) խորհրդի դրական կամ բացասական երաշխավորությունը, որտեղ իրականացվելու է գիտական թեման:

8. Հայտը ներկայացնել հայերեն և անգլերեն լեզուներով՝ մեկական տպագիր և էլեկտրոնային տարբերակներով:

9. Հայտի հայերեն տարբերակում ասպիրանտի ստորագրությունը պետք է հաստատված լինի կազմակերպության ղեկավարի կամ գիտական քարտուղարի ստորագրությամբ:

10. Հայտի տպագիր տարբերակը ներկայացնել A4 ձևաչափի թղթի վրա տպված, 1,5 տողամեջ հեռավորությամբ, 12 չափի «Unicode» տառատեսակով («Sylfaen»՝ հայերեն և «Times New Roman»՝ անգլերեն ու ռուսերեն տեքստերի համար)՝ պահպանելով Հայտի ձևերում առկա աղյուսակների ամբողջականությունը: Էջերի բոլոր կողմերից թողնել 2.5սմ լուսանցք և հաջորդաբար համարակալել ներքևի աջ անկյունում: Հայտի էլեկտրոնային տարբերակը ներկայացնել «Microsoft Word» ձևաչափով՝ մեկ ամբողջական ֆայլով, որի ծավալը չպետք է գերազանցի 2 MB-ը:

11. Հայտին կցել ասպիրանտի գիտական թեզի ղեկավարի գիտական կենսագրությունը, ինչպես նաև տեղեկանք այն մասին, որ հայտատուն հանդիսանում է տվյալ կազմակերպության պետական պատվերով առկա կամ հեռակա ուսուցման ասպիրանտ:

12. Հավելված N3-ի «Ձև 2» կազմելիս օգտվել Հայտի ֆինանսական նախահաշիվ ներկայացնելու ուղեցույցից (հավելված N4):

13. Մրցույթին ներկայացված Հայտերը բացվում են 2012 թ հոկտեմբերի 30-ին՝ ժամը 12:00-ին:

14. Կոմիտեն անցկացնում է Հայտերի տեխնիկական ստուգում:

15. Մրցույթի Հայտը չի քննարկվում, եթե այն.

- չի պարունակում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը,
- լրացված է ոչ ամբողջությամբ,
- ուղարկված է ֆաքսով:

16. Տեխնիկական ստուգմամբ սույն հրավերի պահանջներին համապատասխանող Հայտերը տրամադրվում են մասնագիտական փորձագիտական խորհրդին (այսուհետև՝ Խորհուրդ)՝ գիտական փորձաքննություն իրականացնելու համար:

17. Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում է Հայտի գիտական և գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը, գիտական թեմայի իրականացման նախադրյալները, փուլերը և ժամկետները, պահանջվող ֆինանսական միջոցների հիմնավորվածությունը և գիտության տվյալ բնագավառի առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

18. Գիտական փորձաքննության գնահատման թերթիկի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է գնահատականի միջոցով, առավելագույնը 5 միավոր (0.5 միավորի ճշտությամբ), հետևյալ սանդղակով.

0 միավոր – հարցի պատասխանը բացակայում է կամ այն չի կարող որոշվել տեղեկության բացակայության պատճառով,

1 միավոր – հարցի պատասխանը ներկայացված է մակերեսորեն և անորոշ,

2 միավոր – հարցի պատասխանը բավարար չէ ամբողջական կարծիք կազմելու համար,

3 միավոր – հարցի պատասխանը ընդհանուր առմամբ բավարարում է հարցի պահանջներին, բայց կան զգալի անհամապատասխանություններ, որոնք, սակայն, շտկելի են,

4 միավոր – հարցի պատասխանը որոշակի վերապահումներով համապատասխանում է առաջադրված պահանջներին,

5 միավոր – հարցի պատասխանը լիովին համապատասխանում է հարցի պահանջներին և թերություններն աննշան են:

19. Հայտը գիտական փորձաքննության է ենթարկվում երկու փորձագետի կողմից: Յուրաքանչյուր Հայտի համար փորձագետը լրացնում է Կոմիտեի կողմից սահմանված գիտական փորձաքննության գնահատման թերթիկը՝ պատասխանելով դրանում առաջադրված բոլոր հարցերին:

20. Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու փորձագետների գնահատականների միջին թվաբանականն է:

21. Երկու փորձագետների գնահատականները գնահատման սանդղակի առավելագույն միավորի 50 տոկոս և ավելի չափով տարբերվելու դեպքում Հայտը տրվում է երրորդ փորձագետին՝ գիտական փորձաքննության: Այդ դեպքում, գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երեք փորձագետների երկու իրար մոտ գնահատականների միջին թվաբանականն է: Առաջին երկու փորձագետների գնահատականների և երրորդ փորձագետի գնահատականի հավասար տարբերությունների դեպքում գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու առավելագույն գնահատականների միջին թվաբանականն է:

22. Փորձագետներն ու գիտական փորձաքննությունը կազմակերպող անձինք Հայտերի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկություններ չեն տրամադրում:

23. Հայտերի գիտական փորձաքննության ավարտից հետո Կոմիտեն գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի համար, Հայտերի գիտական փորձաքննության վերջնական գնահատականների նվազման կարգով, ձևավորում է վարկանիշային ցանկ ու ներկայացնում Խորհուրդ՝ քննարկման:

24. Խորհուրդը Կոմիտեի նախագահին է ներկայացնում Հայտերի գնահատականների վերջնական վարկանիշային ցանկը:

25. Կոմիտեի նախագահը, ելնելով ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2012» ենթածրագրի ֆինանսավորման համար հատկացման, ինչպես նաև «Բարեպաշտ սերունդ» և Հայաստանի երիտասարդական հիմնադրամների հատկացումների չափից, որոշում է գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի շեմային գնահատականը, որին հավասար կամ դրանից բարձր գնահատված գիտական թեմաները երաշխավորվում են ֆինանսավորման: Կոմիտեի նախագահը հաստատում է գիտական թեմաների ցանկը՝ նշելով յուրաքանչյուրի իրականացման համար նախատեսվող ֆինանսական միջոցների չափը:

26. Կոմիտեն գիտական կազմակերպության (բուհի) տնօրենի (ռեկտորի) միջոցով հայտատու ասպիրանտներին է տրամադրում Հայտերի գիտական փորձաքննության վերջնական գնահատականներն ու գիտական և գիտատեխնիկական գործունեության տվյալ բնագավառի շեմային գնահատականը:

27. Գիտական կազմակերպության (բուհի) տնօրենի (ռեկտորի) և ֆինանսավորման երաշխավորված Հայտի հեղինակի (ասպիրանտի) միջև ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում է «Ծառայությունների մատուցման պայմանագիր»:

28. Կոմիտեի և ֆինանսավորման երաշխավորված Հայտի հեղինակի (ասպիրանտի) միջև ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային թեմաների իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր»՝ 26 կետում նշված պայմանագրի առկայության դեպքում (մինչև 2013 թ. հունվարի 25-ը):

Անհրաժեշտ փաստաթղթերի ցուցակ

☐ Դիմում
☐ Տիտղոսաթերթ («Ձև 1»)
☐ Նախագծի անոտացիա
☐ Նախագիծ
☐ Ֆինանսական նախահաշիվ («Ձև 2»)
☐ Ֆինանսական նախահաշվի մեկնաբանություն
☐ Ասպիրանտի գիտական թեզի ղեկավարի գիտական կենսագրություն
☐ Ասպիրանտ հանդիսանալու մասին տեղեկանք
☐ Կազմակերպության գիտական (գիտատեխնիկական) խորհրդի երաշխավորություն

Հավելված N1
«Ասպիրանտների հետազոտությունների
աջակցության ծրագիր – 2012» մրցույթի հրավերի

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Մաթեմատիկա

1.2. Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ

1.3. Ֆիզիկա և աստղագիտություն

1.4. Քիմիա

1.5. Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ

1.6. Կենսաբանական գիտություններ

1.7. Այլ բնական գիտություններ

2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

2.1. Քաղաքաշինություն և ճարտարապետություն

2.2. էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ

2.3. Մեխանիկա

2.4. Մեքենագիտություն և մեքենաշինություն

2.5. Քիմիական տեխնոլոգիաներ

2.6. Նյութագիտություն

2.7. Բժշկական սարքաշինություն

2.8. Էկոլոգիա

2.9. Կենսատեխնոլոգիա

2.10. Նանոտեխնոլոգիա

2.11. Այլ տեսակի ճարտարագիտություն ու տեխնոլոգիաներ

3. ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. Ընդհանուր բժշկություն

3.2. Կլինիկական բժշկություն

3.3. Բժշկական կենսատեխնոլոգիա

3.4. Այլ բժշկական գիտություններ

4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Անասնաբուծություն, անասնաբուժություն

4.2. Բուսաբուծություն

4.3. Հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն

4.4. Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա

4.5. Այլ գյուղատնտեսական գիտություններ

5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. Հոգեբանություն

5.2. Տնտեսագիտություն

5.3. Մանկավարժական գիտություններ

5.4. Սոցիոլոգիա

5.5. Իրավագիտություն

5.6. Քաղաքագիտություն

5.7. Սոցիալական և տնտեսական աշխարհագրություն

5.8. Այլ հասարակական գիտություններ

6. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.1. Պատմություն, հնագիտություն

6.2. Լեզվագիտություն, գրականագիտություն

6.3. Փիլիսոփայություն, էթիկա

6.4. Աստվածաբանություն, կրոնագիտություն

6.5. Արվեստագիտություն

6.6. Այլ հումանիտար գիտություններ

THE FIELD AND SPECIALTIES OF SCIENTIFIC AND SCIENTIFIC -TECHNICAL ACTIVITY

1. NATURAL SCIENCES

1.1. Mathematics

1.2. Informatics and Computer sciences

1.3. Physics and Astronomy

1.4. Chemistry

1.5. Earth and Related Environmental Sciences

1.6. Biological Sciences

1.7. Other natural sciences

2. ENGINEERING AND TECHNOLOGY

2.1. Civil Engineering and Architecture

2.2. Electrical Engineering, Electronics, Energy, Computer and Information Technology

2.3. Mechanics

2.4. Science of Machines and Mechanical Engineering

2.5. Chemical Engineering

2.6. Materials Engineering

2.7. Medical Engineering

2.8. Ecology

2.9. Biotechnology

2.10. Nanotechnology

2.11. Other Engineering and Technologies

3. MEDICAL SCIENCES

3.1. Basic Medical Sciences

3.2. Clinical Medicine

3.3. Medical Biotechnology

3.4. Other Medical Sciences

4. AGRICULTURAL SCIENCES

4.1. Animal Husbandry and Veterinary Sciences

4.2. Plant Breeding

4.3. Soil Science, Agro chemistry, Plant Protection

4.4. Agricultural Biotechnologies

4.5. Other Agricultural Sciences

5. SOCIAL SCIENCES

5.1. Psychology

5.2. Economy

5.3. Pedagogical Sciences

5.4. Sociology

5.5. Law

5.6. Political Sciences

5.7. Social and Economic Geography

5.8. Other Social Sciences

6. ARMENOLOGY AND THE HUMANITIES

6.1. History, Archeology

6.2. Linguistics and Literal Studies

6.3. Philosophy, Ethics

6.4. Theology; Religious Studies

6.5. Arts

6.6. Other Humanities

Հավելված N2
«Ասպիրանտների հետազոտությունների
աջակցության ծրագիր – 2012» մրցույթի հրավերի

ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ _____
(անուն հայրանուն)
_____ ից
(ազգանուն)
_____
(հասցե)
_____
(հեռախոս)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ընդունել կից ներկայացվող հայտը՝ «Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր – 2012» մրցույթին մասնակցելու համար:

Դիմող՝ _____ (_____)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

«____» _____ 2012 թ.

Հավելված N3
«Ասպիրանտների հետազոտությունների
աջակցության ծրագիր – 2012» մրցույթի հրավերի

Ձև 1

ՀԱՅՏ

«ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 2012» ՄՐՑՈՒՅԹԻ

Հայտը հանձնված է «_____» _____ 2012 թ. Ծածկագիր՝ _____
(լրացվում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեում)

Տ Ի Տ Ղ Ո Ս Ա Թ Ե Ր Թ

1. Հայտի
- վերնագիրը (15 բառից ոչ ավելի՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով)

_____

_____

- բնագավառը _____
- մասնագիտական դասիչը _____
- բնույթը տեսական ☐ հիմնարար ☐
  փորձարարական ☐ կիրառական ☐

2. Հուշող (բանալի) բառեր (հայերեն և անգլերեն լեզուներով) _____

_____

3. Տեղեկություններ ասպիրանտի վերաբերյալ

Ա.Ա.Հ (լրիվ)	հայերեն				
	անգլերեն				
	ռուսերեն				
Ծննդյան տարեթիվը, ծննդավայրը					
Հասցեն, հեռախոսը, էլեկտրոնային հասցեն					
Կրթությունը (բուհ, մասնագիտություն)					
Ասպիրանտուրա ընդունման տարեթիվը		Բնագավառը			
Գիտական թեզի ղեկավարը (Ա.Ա.Հ -լրիվ)					
Գիտական թեզի ղեկավարի հասցեն, հեռախոսը, էլեկտրոնային հասցեն					
Գիտական թեզի ղեկավարի գիտական աստիճանը		Վերջին թեզի պաշտպանության տարեթիվը		Բնագավառը	
ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեից նախկինում ստացել է՞ք դրամաշնորհ			Այո ☐		Ոչ ☐
Եթե «Այո» , ապա նշեք թեման և դրամաշնորհի ծածկագիրը.					

4. Գերատեսչությունը _____

5. Կազմակերպության լրիվ, կրճատ անվանումները և կազմակերպաիրավական ձևը (ՊՈԱԿ, ՓԲԸ, ԲԲԸ, ՍՊԸ և այլն) _____

6. Կազմակերպության
- հասցեն _____
- հեռախոսը _____
- ֆաքսը _____
- էլեկտրոնային հասցեն _____

7. Թեմայի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը _____ ամիս

8. Աշխատանքի վարձատրության (ներառյալ գործատուի պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները) գումարը _____ հազար դրամ

9. Վերադիր ծախսերի գումարը _____ հազար դրամ

10. Հայցվող ընդհանուր գումարը _____ հազար դրամ

11. Հայտատուի ստորագրությունը _____

12. Կազմակերպության ղեկավարի կամ գիտական քարտուղարի ստորագրությունը _____

«____» _____ 2012 թ.

Կ.Տ.

COVER PAGE

1. Project Title _____

_____

Field of Science _____

Type of Research: Theoretical ☐ Basic ☐

Experimental ☐ Applied ☐

Duration _____ months

2. Keywords _____

_____

3. Ph.D. student (Name, Surname) _____
   a. Data of birth
   b. Education
   c. Year of postgraduate study

4. Supervisor (Name, Surname) _____
   a. Data of birth
   b. Last degree
   c. Affilations

5. Organization (Full name)

_____

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՈՏԱՑԻԱ*

* *Համառոտ մեկ պարբերությամբ ներկայացնել նախագծի նպատակները՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով*

ՆԱԽԱԳԻԾ*

---

* *Ներկայացնել հայերեն և անգլերեն լեզուներով, մինչև 10 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը:*

1. *Մինչև 8 էջի սահմաններում ներկայացնել խնդրի դրվածքը, դրա արդի վիճակը, թեմայի գիտական նպատակները, հետազոտական ծրագիրը, իրականացման եղանակները, առկա անհրաժեշտ նյութական ռեսուրսները:*
2. *Մինչև 2 էջի սահմաններում ներկայացնել օգտագործված գրականության ցանկը:*

Ձև 2

ՀԱՅՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Հայտի ծածկագիրը _____

(լրացվում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեում)

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (ներառյալ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները)			Պահանջվող գումարը (հազար դրամ)
ազգանուն անուն հայրանուն	ամսական	ամիսների քանակը	
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			
ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, այդ թվում			
1. ՍԱՐՔԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ (թվարկել 100000 ՀՀ դրամը գերազանցող բոլոր ծախսերը, հիմնավորվել ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ)			
1)			
2)			
...			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			
2. ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ (հիմնավորել ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ)			
1) տեղական գործուղումների տրանսպորտային ծախսեր			
2) տեղական գործուղումների օրապահիկ			
3) տեղական գործուղումների գիշերավարձ			
4) միջազգային գործուղումների տրանսպորտային ծախսեր			
5) միջազգային գործուղումների օրապահիկ			
6) միջազգային գործուղումների գիշերավարձ			
7) գործուղումների հետ կապված այլ ծախսեր (վիզա կամ այլ վճարումներ)			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			
3. ԵՆԹԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ (նշել ենթապայմանագրային համագործակցության բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց, համագործակցությունը մանրամասն նկարագրել ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ)			
Ենթապայմանագրային համագործակցության վարձավճար			
ազգանուն անուն հայրանուն	օրավարձը	օրերի քանակը	
1)			
2)			
…			
Ենթապայմանագրային համագործակցության նյութեր և ծառայություններ (թվարկել 120000 ՀՀ դրամը գերազանցող բոլոր կետերը և հիմնավորել)			
1)			
2)			
…			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			
4. ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՍԵՐ			
ՀԱՅՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			
ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ (ներկայացնել ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ)			

Հայտատու _____ _____

(ստորագրություն) (ազգանուն, անուն, հայրանուն)

Կազմակերպության ղեկավար _____ _____

(ստորագրություն) (ազգանուն, անուն, հայրանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ _____ _____

(ստորագրություն) (ազգանուն, անուն, հայրանուն)

Կ.Տ.

---

* *Օգտվել հայտի ֆինանսական նախահաշիվ ներկայացնելու ուղեցույցից (հավելված N4)*

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ*

* *Բացատրել և հիմնավորել ֆինանսական նախահաշվի բոլոր կետերը*

Հավելված N4
«Ասպիրանտների հետազոտությունների
աջակցության ծրագիր – 2012» մրցույթի հրավերի

ՈՒՂԵՑՈՒՅՑ
ՀԱՅՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

1. Ֆինանսական նախահաշիվը («Ձև 2») ներկայացնել գիտական թեմայի իրականացման լրիվ ժամանակահատվածի համար՝ չգերազանցելով սահմանված գումարը:

2. Աշխատանքի վարձատրության համար նախատեսվող գումարը չպետք է գերազանցի գիտական թեմայի իրականացման համար նախատեսված ամբողջ գումարի 50 տոկոսը:

3. Ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով կարող են նախատեսվել հետազոտական սարքավորումների, ծառայությունների և գիտական հետազոտությունների ընթացքում օգտագործվող նյութերի ձեռքբերման ծախսեր: 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամը գերազանցող սարքավորման կամ ծառայության անհրաժեշտությունը հիմնավորել ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ:

4. Ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով գործուղումների համար նախատեսվող գումարը կարող է օգտագործվել ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա գիտական միջոցառումներին մասնակցելու համար և չպետք է գերազանցի գիտական թեմայի իրականացման համար նախատեսված ամբողջ գումարի 20 տոկոսը: Գործուղման նպատակը և դրա հետ կապված բոլոր ծախսերը հիմնավորել ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ: Գործուղումների համար օրապահիկը և գիշերավարձը հաշվարկել ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված ծախսերի չափերի: Օտարերկրյա գործուղումների ընդհանուր ժամանակը չպետք է գերազանցի երկու ամիսը:

5. Ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով կարող է նախատեսվել նաև ենթապայմանագրային համագործակցություն. տվյալ գիտական թեմայի իրականացման համար որոշակի գումար կարող է հատկացվել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց: Ենթապայմանագրային համագործակցության դեպքում ասպիրանտը ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հետ պետք է կնքի պայմանագիր և այն համաձայնեցնի Կոմիտեի հետ: Ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ յուրաքանչյուր ենթապայմանագրային համագործակցության համար ներկայացնել առանձին հիմնավորում:

6. «Վերադիր ծախսեր» հոդվածով նախատեսվում է գիտական կազմակերպության (բուհի) տնօրենի (ռեկտորի) իրավասությանը թողնված գիտական թեմայի ֆինանսավորման տոկոսը, որով տնօրենը (ռեկտորը) ապահովում է գիտական կազմակերպության (բուհի գիտական մասի) գործունեությունը և ստեղծում գիտական թեմայի կատարման համար անհրաժեշտ պայմաններ: Վերադիր ծախսերը չպետք է գերազանցեն գիտական թեմայի ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով նախատեսված գումարի 5 տոկոսը:
Գիտական թեմայի կատարման անհրաժեշտությունից ելնելով՝ գիտական թեմայի ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով հատկացված գումարը, Կոմիտեի համաձայնությամբ, գիտական թեմայի իրականացման ընթացքում կարող է վերաբաշխվել մեկ անգամ